



ՃՐՄՁԻՄՅԸ ԾՐՄԾՁՆԻՆՈՒԹՅԱՆ ԻԾԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՄԱՆՈՒՄ ԳՐԱՄԱՆՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

**ԾՁՅՅՅՅ**

**N 897-Ա/Ք**

**11.09. 2014թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ՝ 2014  
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N 829-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
70-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին  
մասի 1-ին կետով և ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի N 10-Ն որոշման  
հավելված N 2-ի 30-րդ կետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝**

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2014 թվականի օգոստոսի 26-ի՝ «Հանրակրթական  
հիմնական դպրոցի 5-րդ դասարանի «Ազգային երգ ու պար» և «Երաժշտություն»  
առարկաների փորձնական ծրագրերը հաստատելու և ուսումնական հաստատություններում  
փորձարկելու մասին» N 829-Ա/Ք հրամանի 2-րդ կետը լրացնել նոր՝ 11-րդ ենթակետով. «11) ՀՀ  
Շիրակի մարզ, Արևիկի միջնակարգ դպրոց»:

2. Հրամանը լրացնել նոր՝ 2.1 կետով՝

«2.1 Փորձնական ծրագիրն իրականացնող դպրոցներում «Ազգային երգ ու պար»  
առարկային հատկացնել շաբաթական 1,5 դասաժամ (տարեկան 51 դասաժամ), որից 1 ժամը  
դպրոցը կարող է տրամադրել «Ֆիզկուլտուրա» առարկային հատկացված դասաժամերից, իսկ  
0,5 ժամը՝ «Երաժշտություն» առարկային հատկացված դասաժամից»:

**/ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ**